ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/205

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.08.2020թ. թիվ 26/26-1/12634-2020 գրությամբ Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի 18.08.2020թ. թիվ 01/61-15159 գրության հիման վրա 24.08.2020թ. թիվ 26/26-1/12634-2020 գրությամբ նախաձեռնել է Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/205 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 11:05-ին և 11.09.2020թ. ժամը 12:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.08.2020թ. թիվ 01/61-15159 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 07.07.2020թ. հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/115 ծածկագրով շինարարական նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ն և գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել ընտրված մասնակից:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո՝ 28.07.2020թ., Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացվել ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/115-8 ծածկագրով պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի Մասնակիցը զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի:

Ամփոփելով՝ Պատվիրատուն առաջարկել է, հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետը, Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/205 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 11:05-ին և 11.09.2020թ. ժամը 12:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/115 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 28.07.2020թ. Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակիցը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 11.08.2020 թվականը/ Պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, որը վերջինիս կողմից չի ներկայացվել:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ա/Ձ Դավիթ Տերզիկյանը զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.08.2020թ. թիվ 26/26-1/12634-

2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 18.08.2020թ. թիվ 01/61-15159 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում.***

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/115 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ն և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 28.07.2020թ. Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակիցը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 11.08.2020 թվականը/ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, որը վերջինիս կողմից չի ներկայացվել:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ն զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և***

<u>պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) ***<u>պարբերության համաձայան՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***

Ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***<u>եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>***

Այսպիսով՝ ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից սույն Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ, գտնում եմ, որ Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ն, Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 28.07.2020թ. ծանուցվելով ներկայացնելու պայմանագրի կնքված տարբերակը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում, այն է՝ 11.08.2020թ. ներառյալ, չի կնքել պայմանագիրը և ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի

խախտում, հետևաբար առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.08.2020թ. թիվ 26/26-1/12634-2020 գրությամբ Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Դավիթ Տերզիկյան Ջիվանի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**